



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2018 թվական N 12 - Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 11 քաղաքացիների հատկացնել 320 000 / երեք հարյուր քսան հազար / դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում, կատարել գումարի վճարում:

Ա.Սիննյան

## Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Ասատրյան Երջանիկ	Աշտարակ	20000	
2	Մուրադյան Սարիբեկ	Ագարակ	50000	
3	Խաչատրյան Քնար	Կարին	50000	
4	Ղալաչյան Նարինե	Սասունիկ	20000	
5	Սարգսյան Մարգարիտ	Ուշի	20000	
6	Կիրակոսյան Ավետիս	Լեռնարոտ	50000	
7	Երվանդյան Նաիրա	Արագածոտն	30000	
8	Ավդալյան Գրիգոր	Արագածավան	20000	
9	Խաչատրյան Վալերիկ	Արագածավան	20000	
10	Ասատրյան Հայաստան	Մաստարա	20000	
11	Կարապետյան Թամարա	Բերքառատ	20000	